ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/6-3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **25.05.2018թ.**
Ժամը 11:00

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/6-3» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. *Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.*

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊ ընկերության կողմից գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. *Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.*

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊ ընկերությունը, հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությանը հիմնավորող, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության վերը նշված որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցման արդյունքում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. *Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.*

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. ***«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/6-3» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.***

Հանձնաժողովը որոշեց՝ «ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/6-3» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի N 1, N 2 և N 3 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու է սահմանված կարգով ծանուցվելուց և պայմանագրի նախագիծը ներկայացվելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)
ՀՌՀ աշխատակազմի իրավական
ապահովման բաժնի պետ — **Ա. Ներսիսյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)
ՀՌՀ աշխատակազմի գործերի կառավարչության
գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — **Ա. Մատինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)
ՀՌՀ աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի
և վերահսկողության վարչության պետ — **Ա. Վարդանյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)
ՀՌՀ աշխատակազմի
քարտուղարության պետ — **Վ. Դավթյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)
ՀՌՀ աշխատակազմի միջ. կապերի,
տեղեկատվության և զարգացման ծրագրերի
բաժնի գլխավոր մասնագետ — **Գ. Դարբինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)
ՀՌՀ աշխատակազմի իրավական
ապահովման բաժնի գլխավոր մասնագետ — **Ք. Քոչարյան**